ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՉՈՐՐՈՐԴ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ՄԵԿՆՈՒՄ

Հոկտեմբերի 2-ին, շաբաթի, օգնականությամբն Աստուծո, Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը ձեռնարկեց արտասահմանում կատարելիք իր չորրորդ հովվապետական ուղևորության։

Շնորհաբաշխ ու պատմական այս ուղևորության հիմնական նպատակն էր, Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Եղիշե սրբազան արքեպիսկոպոսի սիրալիր հրավերով, ուխտի գնալ սուրբ տեղյաց աստվածակոխ վայրերն ու տաճարները, և անձամբ տանել հայրական իր օրհնություններն ու ողջույնները Երուսաղեմի հայոց Առաքելական Աթոռին, Սրբոց Հակոբյանց վանքի միաբանության և Երուսաղեմի Ս. Հարության Տաճարի նորոգության գործին։

Նորին Ս. Օծությունը, դեպի Երուսաղեմ իր ուխտագնացության ճանապարհի վրա, ծրագրել էր մի քանի օրով մնալ նաև Լոնդոնում, ջերմ հրավերովը Քենտրբերիի Արքեպիսկոպոս Նորին Սրբություն դոկտ. Մայքլ Ռեմզիի, և այս ուրախ առթիվ իր օրհնությունները տալ նաև Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Պսակ եպիսկոպոս Թումայանին և Լոնդոնի հայ համայնքին։

Այնուհետև ուղևորության ծրագրի մեջ նախատեսվում էր, նոյեմբերի սկիզբներին, Վեհափառ Հայրապետի այցելությունը Եգիպտոս, թեմական առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանի հրավերով, տանելու հայրական իր օրհնությունները, երկրորդ անգամ, Եգիպտոսի հայ հավատացյալ ժողովրդին։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, 1963 թվականի ապրիլին, եղբայրական հրավեր էր ստացել Հնդկաստանի Մալաբար քույր եկեղեցու պետ Նորին Սրբություն Տ. Բասիլիոս Բ Սրբազնագույն Կաթողիկոսից՝ այցելելու Քոտայամ, Մալաբար եկեղեցու կաթողիկոսանիստ քաղաքը, եկեղեցիներն ու թեմերը և հավատացյալ ժողովրդին։ Նորին Ս. Օծությունը ընդունել էր եղբայրական այս հրավերը և որոշել էր այս առթիվ այցելել նաև Գանգեսի հեռավոր և հյուրընկալ ափերի վրա գտնվող Կալկաթայի և Բոմբեյի հայ համայնքներին և եկեղեցիներին։

Վեհափառ Հայրապետի կատարելիք այս ուղևորությունը 1963 թվականի հոկտեմբեր–դեկտեմբեր ամիսներին հանդիսանում էր մեծ իրադարձություն Սփյուռքի մեր ազգային-եկեղեցական տարեգրության մեջ։

Եվ ահա, 1963 թվականի հոկտեմբերի 2-ին, չորրորդ անգամ լինելով, Մայր Աթոռ Ս. Էջմիածնից, քաղաքամայր Երևանից ճա-

նապարհ էր ընկնում Վեհափառ Հայրապետը, Իր օրհնությունները և վերածնված Մայր Հայրենիքի ու ժողովրդի ողջույնը տանելու հեռավոր ափերի վրա ապրող հայրենաբաղձ Իր զավակներին և քրիստոնեական քույր եկեղեցիներին։

Մայր Աթոռ Ս. Էջմիածնից մեկնելուց առաջ, Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես առաջնորդվում է Մայր Տաճար՝ Իր ուղևորության նախօրյակին ծնրադրելու Միածնածէջ Ս. Սեղանի առաջ և աղօթելու բարեհաջող ուղևորության և արդյունավետ գործունեության համար։

Միաբանության անունից Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ է մաղթում լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։

Երեկոյան ժամը 5-ին, Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Երևանի օդանավակայանը։

Նորին Ս. Օծության բարի ճանապարհ մաղթելու համար, այստեղ են եկել Մայր Աթոռի ողջ միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, Մայր Աթոռի պաշտոնական անձնավորությունները ու հավատացյալների բազմություն։

Վեհափառ Հայրապետին ճանապարհում էին նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Կարլեն Դալլաքյանը։

Իր Վեհափառ որդուն բարի ճանապարհ էր մաղթում նաև Տիրամայրը։

Երեկոյան ժամը 5.30-ին, ինքնաթիռը անջատվում է հայրենի հողից և բարձրանում երկնքներ, ուղղություն վերցնելով դեպի Մոսկվա։

Վեհափառ Հայրապետի այս ուղևորության կապակցությամբ, Մայր Աթոռի դիվանի կողմից թեմերին և մամուլին տրվում է 27 սեպտեմբեր 1963 թվակիր հետևյալ հաղորդագրությունը.

«Աստուծո ողորմությամբ, Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը, սիրալիր հրավերով ամենապատիվ Տ. Եղիշե պատրիարքի, մեկնում է ուխտի դեպի Ս. Քաղաք Երուսաղեմ, տանելու Իր օրհնությունը Սրբոց Հակոբյանց միաբանության և ժողովրդին, ու նաև Ս. Հարության Տաճարի նորոգության գործին։

Նորին Ս. Օծությունը Իր ճանապարհին մի քանի օր կմնա Լոնդոնում, ջերմ հրավերովը Քենտրբերիի Գերաշնորհ Արքեպիսկոպոսի, այս առթիվ Իր օրհնությունը տանելով գերաշնորհ հայրապետական պատվիրակին և Լոնդոնի հայ համայնքին։

Վեհափառ Հայրապետը նոյեմբերին կուղևորվի դեպի Եգիպտոս, հրավերովը թեմական առաջնորդի, ու կտանի Իր օրհնությունը Եգիպտոսի հայ հավատացյալ ժողովրդին։

Նորին Ս. Օծությունը ապա կճանապարհորդի դեպի Քոտայամ (Հնդկաստան), եղբայրական հրավերովը Մալաբար քույր Եկեղեցու Պետ Բասիլիոս Սրբազնագույն Կաթողիկոսի։

Նորին Ս. Օծությունը Հնդկաստանում կայցելի նաև Կալկաթայի և Բոմբեյի հայոց եկեղեցիները, բաշխելով բոլորին օրհնություններ Ս. Էջմիածնից։

Վեհափառ Վազգեն Ա Կաթողիկոսին դեպի Երուսաղեմ կուղեկցեն գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը՝ վերատեսուչ Հոգևոր Ճեմարանի, հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետը՝ գավազանակիր, և ճարտարապետ Միքայել Մազմանյանը՝ անդամ Գերագույն Հոգևոր Խորհրդի, իսկ դեպի Հնդկաստան՝ Վրաստանի հայոց թեմական առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոսը, գավազանակիր հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանը։

Վեհափառ Հայրապետը դեկտեմբերի վերջերին Իր շքախմբով կվերադառնա Մայր Աթոռ Ս. Էջմիածին»։

Հոկտեմբերի 7-ին, երեքշաբթի, երեկոյան ժամը 6-ին, Մոսկվայի Շերեմետևի միջազգային օդանավակայանում, Վեհափառ Հայրապետին և Նրա շքախմբի անդամներին ճանապարհում էին Մայր Աթոռի միաբանության, Մոսկվայի մեջ Հայ Եկեղեցու հոգևորականության, Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի և հայ հավատացյալների ներկայացուցիչներ։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին ճանապարհում էին նաև Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիի ներկայացուցիչները, գլխավորությամբ Բիմեն սրբազան միտրոպոլիտի։

Մեկնողներին բարի ուղերթ էին մաղթում նաև ՍՍՌՄ Մինիստրների սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահ տեղակալ պր. Ոչագանովը և խորհրդի աշխատակից պր. Սոլովյովը։